

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Մույն հոդվածում քննարկման առարկա են հանդիսանալու *ստ* ածանցով կազմված մի քանի բառեր, որոնք կա՛ն այդ ածանցի բազմիմաստությունը նկատի առնված ձևով չեն մեկնաբանվել, կա՛ն որոնց մեկնաբանությունն այս կամ այն առումով ճշգրտման անհրաժեշտություն է զգում:

*Ստ* ածանցն օժտված է իմաստային տարբեր առումներով, բայց ճանաչվել է որպես մենիմաստ ձևույթ՝ *կտրել*, *հատել* նշանակությամբ (պոչատ, գունատ, կռնատ և այլն): Միայն վերջերս առաջին անգամ այդ ածանցը ներկայացվեց ոչ թե մեկ, այլ չորս նշանակությամբ՝ *բացասման* (պոչատ, գունատ և այլն), *սաստկական* (հաստատ, լմփատ, մորատ, բկատ, Արարատ և այլն), *սերման* (կտավատ, փշատ, հավատ), *վերածման* (բացատ, ծվատ և այլն) նշանակություններով:<sup>1</sup> Հետագա պրպտումները ցույց են տալիս, որ *ստ* ածանցով կազմված բառերի հատկապես լրիվ ընդգրկման, դրանց մասին պատկերացումն ավելի ամբողջացնելու ուղղությամբ դեռևս որոշակի անելիքներ կան: Եվ ահա սույն հոդվածով կամենում ենք հնարավորին չափով վերացնել այդ բացը:

Նախքան բուն հարցին անցնելը նշենք, որ *ստ* ածանցի իմաստային առումների ճիշտ ընկալմանը, դրա բառակազմական հնարավորությունների մասին համարժեք պատկերացում ունենալուն վնասել է նաև այն կարծիքը, թե իբր դրա (*ստ* ածանցի) առաջացումն այնքան էլ խոր վաղեմություն չունի, հետագայի, ավելի ուշ ժամանակների իրողություն է: *Ոտ*, *ավոր* ածանցները (հիվանդոտ, ծխոտ, լուսավոր) համարելով «նախագրաբարյան շրջանում ծագած»՝ Մ.Աբեղյանը այժմ մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ հետևյալն է նշում. «Բայց կան ածանցներ, որոնք մեր լեզվի պատմական շրջանում են առաջ եկել ... Այդպիսի մոր ածանցներից մեկն է «ատ», որ շատ զործածական է»:<sup>2</sup> Դժվար է հավատալ, թե իսկապես *հիվանդոտ* (հիվանդահոտ), *ծխոտ* (ծխահոտ) բառերն ավելի հին ժամանակների բաղադրություն են, քան ասենք *հավատ*-ն ու *բացատ*-ը: Գ.Ջահուկյանն էլ այն կարծիքին է, թե *ստ* ածանցավոր բառերը «ոչ շատ հին կազմություններ» են՝ որպես այդպիսի բառեր նկատի ունենալով այսպիսիները՝ միջատ, ունչատ, պնչատ, գունատ, քլփատ:<sup>3</sup> Մենք այն համոզմանն ենք, որ *ստ* ածանցի առաջացման մասին այսպիսի կարծիք չէր կարող լինել, եթե դա ճանաչված լիներ ոչ թե միայն բացասման, այլ վերը նշված նաև մյուս նշանակություններով:

Նախ այն բառերն ուշադրության արժանացնենք, որոնց կազմում *ստ* ածանցը հանդես է գալիս վերածման նշանակությամբ:

*ԿՈՃԱՍ*, *ԿՃԱՍ*. Պետք է նշել, որ այս բառերը թեև բառարաններում սովորաբար ներկայացվում են որպես առանձին գլխաբառեր, բայց ծագումնաբանորեն մույնն են, իրար հարաբերում են այնպես, ինչպես ասենք, *օրորել* և *օրրել*, *մոլորվել* և *մոլրվել* բառաձևերը: Դրանք առաջացել են *կոճ* արմատից, *կճատ* բառի առաջին բաղադրիչը /*կճ*/ *կոճ* արմատի բունն է, այսինքն՝ դրա հնչյունափոխված ձևը:

Թեև Հր.Աճառյանը *կոճ* արմատը ճանաչում է որպես ընդարձակ զարգացում կրած արմատ, դրանով կազմված բազմաթիվ բառեր է քննարկել, բայց դրանց կազմում տեղ չի տվել *կոճատ* և *կճատ* բառերին, ինչպես նաև դրանք չի դիտել որպես *ստ* ածանցով կազմված:<sup>4</sup> Մեր լեզվում բավարար քանակությամբ համապատասխան փաստական նյութ կա, որը հիմք է տալիս ասելու, որ *կոճատ*, *կճատ* բառերը կազմված են *կոճ* արմատից և վերածման նշանակությամբ *ստ* ածանցից: Նախ *կոճ* արմատի մասին: Հանրահայտ է, որ դրա առաջնային նշանակություններից մեկն է «հորիզոնա-

<sup>1</sup> Մ. Մե Լ ք ո ն յ ա ն, «Ատ» ածանցի և դրանով կազմված բառերի մեկնություններ, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 84-94:

<sup>2</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 226:

<sup>3</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 355:

<sup>4</sup> Հր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ.2, Եր., 1973, էջ 624-626, հ.3, էջ 50-53:

բար կտրված ծառաբնի՝ արմատի վրա մնացած մասը»։ Ահա այդ բառն իր բացատրությանը Ս.Մալխասյանցի բառարանում. «ԿՈՒՐ. ծառի բունի մի մասը՝ հորիզոնական ուղղությամբ կտրված- կոճղ»։<sup>5</sup> Կոճ բառի այս նշանակության հետ մնանության գույքորումով չե՞ն առնչվում մեզ հետաքրքրող *կոճատ*, *կճատ* բառերը «կիսայրած մոմ, մոմի վերջին մնացորդ» նշանակությամբ։ Նշենք այդ բառերի գործածություններ. «*Կոճատները* պահեցեք, նորից կհալենք, մոմ կթափենք», «Մոմի *կճատները* դեն մի ձգեք, կարելի է հալել, նոր մոմեր ձուլել նրանցից»։<sup>6</sup> Կիսով չափ այրված մոմը, մոմի վերջին մնացորդը նման չէ՞ կտրված ծառաբնի արմատի վրա մնացած մասին։ Իսկ դա էլ նշանակում է, որ *կոճատ*, *կճատ* բառերում *ատ* ածանցն օժտված է ոչ թե բացասման, այլ վերածման իմաստով. կոճատ, այսինքն՝ կոճի վերածված, կոճի նման դարձած։

Երբ մտածում ես, թե ինչը կարող էր խանգարած լինել, որ *կոճատ*, *կճատ* բառերն այսպիսի մեկնաբանությամբ չեն ներկայացվել, ուրիշ որևէ պատճառ չես տեսնում, քան այն, որ *ատ* ածանցը ճանաչված չի եղել վերածման նշանակությամբ։

*ԱԿՆԱՍ*. Մենք այն համոզմանն ենք, որ այս բառն էլ կազմված է վերածման նշանակությամբ *ատ* ածանցով։ Բառիս հիմքը ոչ թե *ակն* բառն է, ինչպես ոմանք կարծում են, այլ՝ *ակնան* բառի հնչյունափոխված ձևը (հմմտ. քաղաք-քաղքենի, ականջ - ակնջխության տալ)։ Ական բառը հայտնի է *ծակ*, *փոս* նշանակությամբ։<sup>7</sup> *Ակնատ* բառի նշանակությունն է. «Պատի վրա ներսի կողմից փորված փոս, որ ծառայում է իբրև դարակ, պահարան. *Մրցըր ակնատումն է։ Ակնատումը լիքը ճան*»։<sup>8</sup> Ուրեմն՝ *ակնան* /*ակն*/ հիմքով և *ատ* ածանցով արտահայտվում է «վոսի վերածված» հասկացությունը։

Մեզ անհիմն է թվում ակնատ բառը նաև «աչքից գուրկ, առանց աչքի, աչագուրկ» նշանակությամբ ներկայացնելը։<sup>9</sup> Համենայն դեպս, ոչ մի բառարանում չի բերվում և ոչ մի օրինակ, որ վկայի, թե *ակնատ*-ը օժտված է նման նշանակությամբ։ Պարզապես *ակնատ* բառում *ատ* ածանցն ընկալվել է բացասման նշանակությամբ, *ակն* հիմքն էլ *աչք* իմաստով և ենթադրաբար այդ բառին վերագրվել է նման նշանակություն։

*ԽՐԱՄԱՍ*. Այս բառում էլ ածանցը հանդես է գալիս վերածման նշանակությամբ։ *Խրամ*, *խրամատ* բառերը գործառնական որոշակի ոլորտ ունեն, հիմնականում ռազմական կյանքին են վերաբերում։ *Խրամ* բառի նախնական նշանակությունն է «պատի, պարսպի վրա բացվածք», դա նշանակում է նաև պարսպի շուրջը փորած խոր ու լայն փոս, որ լցնում են ջրով՝ հակառակորդի առաջխաղացումն արգելելու համար։<sup>10</sup> *Խրամատ*ն էլ որոշակի տարածք խրամի, փոսի վերածվածն է, «պատվարով պաշտպանված խոր ու նեղ գետնուղին»։

*ԹԵՐԱՍ*. Կասկածից դուրս է, որ այս բառը կազմված է *թեր* և *ատ* բաղադրիչներից։ Բայց սրա *ատ* ածանցն էլ հանդես է գալիս ոչ թե բացասման, այլ վերածման նշանակությամբ։ «Շշից զինի ածեց մի բաժակ, շշի թերատը ջրով լցրեց»։<sup>11</sup> Այս և նման գործածություններում *թերատ* բառը նշանակում է թերի դարձած, կիսատած։ *Թեր* բաղադրիչը, որ *թերի* բառի արմատն է, հանդես է գալիս «պակաս, կիսատ» նշանակությամբ։

*ԽԵՑԱՍ*. *Խեց* բառը հայտնի է «կավաճողից պատրաստված աման» նշանակությամբ, որից առաջացած *խեցագործ* բառը նշանակում է *բրուտ*։ *Խեցատ* բառը նշանակում է ոչ թե կավամանից պոկված կտոր, այլ «կոտրված խեցեղեն աման» /«Խեցատի մեջ ջուր ածիր, հավերը խմեն»/։

Ակնհայտ է, որ *խեցատ* բառում *ատ* ածանցը բացասման նշանակությամբ հանդես չի գալիս, չի բացասում հիմք հանդիսացող *խեց*-ի նշանակությունը, չի նշանակում խեց չունեցող, խեցից գուրկ։ Կավամանի կոտրվելուց հետո մնացած օգտագործելի մասը դիտվել է որպես նոր ամանի վերածված իր. խեցը վերածվել է խեցատի։

<sup>5</sup> Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 463:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 464, 448:

<sup>7</sup> Նոր բառգիրք հայկազենան լեզուի, հ.1,Եր., 1979, էջ 21: Մտ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ.1, էջ 25:

<sup>8</sup> Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ.1, էջ 30:

<sup>9</sup> Նույնը: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 17:

<sup>10</sup> Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ.2, էջ 308:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 98:

*ԽՈՌԱՍ*. Արմատական բառարանում *խոռ* բառը ներկայացված է «ծակ, փոս, ծերպ» նշանակությամբ:<sup>12</sup> Մեր որոշ բարբառներում *խոռ* բառը գործածվել է «լեռան մեջտեղից բացված նեղ անցք» նշանակությամբ, որից առաջացել է *խոռատ* բառը:<sup>13</sup> Դժվար չէ զգալ, որ *խոռատ* բառն այսպիսի նշանակությամբ որոշակիորեն հուշելու էր, որ *ատ* ածանցը ճանաչվեր վերածման նշանակությամբ: Բայց նման մտտեցում չի ցուցաբերվել այս դեպքում էլ: Եվ տարակուսանքի մեջ ես մնում, թե *ատ*-ի բացասման նշանակությունն ինչպես են համատեղել բառահիմքի, սույն պարագայում «լեռան մեջտեղից բացված նեղ անցք» նշանակության հետ:

Այժմ ուշադրության առարկա դարձնենք այնպիսի բառեր, որոնցում *ատ* ածանցը հանդես է գալիս ոչ թե վերածման, այլ բացասման, սաստկական, սերման նշանակություններով:

*ՓԻՆԱՍ*. Որքան մեզ հայտնի է, այս բառը ներկայացվում է որպես «կեղտ, կղկղանք» նշանակությամբ *փին* արմատից և բացասման նշանակությամբ *ատ* ածանցից կազմված:<sup>14</sup> Նման մտտեցման դեպքում բնականաբար պիտի շրջանցված լինեի այն հարցին պատասխան տալը, թե այդպիսի նշանակությամբ *փին* բառով և *ատ* ածանցով կազմված բառը ինչպես կարող էր օժտված լինել «աղբատ, խեղճ, ողորմելի, հեզ» նշանակությամբ: Պրպտումների ընթացքում մեր ուշադրությունը գրավեց Ս.Մալխասյանցի բառարանում որպես *կեղտ, կղկղանք* նշանակությամբ *փին* բառից առանձին ներկայացված *փին* նույնանունը՝ օժտված *աքացի* նշանակությամբ:<sup>15</sup> Այսպիսի նշանակությամբ *փին* բառ նկատի առնված չէ Հր.Աճառյանի, Գ.Ջահուկյանի կողմից փինատ բառի մեկնության կապակցությամբ, և ավելացնենք նաև, որ ինքը Մալխասյանցն էլ նկատի չի առել, մա *փինատ* բառը չի ներկայացնում որպես *աքացի* նշանակությամբ *փին* բառից կազմված: Փին բառն *աքացի* նշանակությամբ ներկայացնելիս Մալխասյանցը նկատի է ունեցել նաև «փին զարնել» հարադրությունը՝ դա ներկայացնելով երկու նշանակությամբ՝ «1. Աքացել: 2. Մեկից գերազանցել»:<sup>16</sup>

Նկատի ունենալով *փին* բառի մալխասյանական բացատրությունը՝ մենք դա ենք դիտում որպես առաջին բաղադրիչ *փինատ* բառի համար՝ վերջինս ճանաչելով վերը նշված նշանակությամբ՝ «խեղճ, ողորմելի, հեզ, աղբատ»: Իմաստային այնքան էլ դժվար ընկալելի կապ չի դրսևորվում *աքացի, աքացել*, «մեկի հանդեպ գերազանցություն ցուցաբերել» նշանակությունների և բացասման *ատ* ածանցով կազմված *փինատ* բառի վերը նշված նշանակության միջև (աղբատ, խեղճ, հեզ):

*ՓԱՐԱՍ*. Այս բառը ճանաչվում է որպես ասորերեն փոխառություն (parat – ցրվել, տարածել) և դիտվում է որպես փարատել բայի հիմք:<sup>17</sup> Գ.Ջահուկյանը «քիչ հավանական» է համարում փարատել բայի աղբյուրը ասորերեն նշված բառը համարելը, բայց ինքն էլ որոշակի խոսք չի ասում այդ բայի ստուգաբանության մասին՝ փորձելով դրանում գտնվող *տ*-ի զուգահեռներ տեսնել միդեոլանդերեն sproeten – *սրսկել*, sproetelen – *բխել* բառերի մեջ:<sup>18</sup> Մեր լեզվում կա *փարտել* բառը, որը «բնիկ հայ բառ» է համարվում<sup>19</sup> և օժտված է պարունակել, *պարփակել*, *շուրջը ածել*, *շուրջը պատել*, *շոյել*, *կատչել* իմաստային առումներով:<sup>20</sup>

Մենք այն համոզմանն ենք, որ *փարատել* բայի հիմքը ոչ թե ասորական փոխառյալ բառն է, այլ *փարտել* բայի *փար* արմատը, որի հետ գործածված է բացասման նշանակությամբ *ատ* ածանցը: *Փարատ* բառն առանձին, ինքնուրույն լայն գոր-

<sup>12</sup> Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 398:

<sup>13</sup> Նույնը:

<sup>14</sup> Նուն տեղում, հ. 4, էջ 505: Գ. Ջահուկյանը *փին* բառը «աղբ, կղկղանք» նշանակությամբ է ճանաչում, բայց «փինատ» բառում չլուծված է համարում *ատ*-ի հարցը՝ առանց որևէ նոր մեկնություն առաջ քաշելու: Տե՛ս Հայոց լեզվի պատմություն, մալխասգրային ժամանակաշրջան, Եր., 1978, էջ 209, 150:

<sup>15</sup> Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 500:

<sup>16</sup> Նույնը:

<sup>17</sup> Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 486: Մտ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 490:

<sup>18</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 194:

<sup>19</sup> Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 487:

<sup>20</sup> Մտ.Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 491: Էդ.Աղայան, նշվ. աշխ., էջ 1514:

ծածուխում չունի, դրանից կազմված *փարատել* բայն օժտված է այնպիսի նշանակություններով, որոնք *փարել* բառի վերը նշված իմաստներին հարաբերում են այնպես, ինչպես առհասարակ բացասման նշանակությամբ առ ածանցով կազմված բառերն են հարաբերում իրենց հիմքին (գույն-գունատ, պոչ-պոչատ): Այլ ձևով ասած՝ փարատել բառով արտահայտվում է *փարել* բայով արտահայտված իմաստների բացասում: Նշենք նաև փարատել բայի իմաստային առումները՝ հեռացնել, ցրել, ի չիք դարձնել, վերացնել, վանել:<sup>21</sup> Այս կապակցությամբ կարևոր ենք համարում ուշադրություն հրավիրել այն իրողության վրա, որ Մ.Աբեղյանն *ատ* ածանցով կազմված բառերը թվարկելիս նշում է նաև *փարատ*, *փարատել*՝ վերջինս այսպես մեկնաբանելով. «փարատ (որից՝ փարատել - փարումն կտրել)»:<sup>22</sup>

**ՊԱՂԱՍ.** Բառս առանձին հանդես չի գալիս, այլ *աղաչ - պաղատ*, *աղատ-պաղատ* հարադիրների կազմում: Հր.Աճառյանը պաղ բառից կազմված բաղադրյալ բառերի մեջ չի նշում պաղատ բառը, որ նշանակում է, թե դրանց միջև ծագումնաբանական ընդհանրություն չի տեսնում: Նա պաղատ բառը համեմատել է լազերենի պալակար, օպալակարու բառերի հետ, բայց հետագայում հրաժարվել այդ կարծիքից:<sup>23</sup>

**Պաղատ-ը պաղատել** բայի հիմքն է, որի առաջին բաղադրիչ *պաղ* արմատը նշանակում է *սառույց, ցուրտ, սառն*, փոխաբերական նշանակությամբ՝ ոչ սիրալիք:<sup>24</sup> **Պաղատել** բառում *ատ* ածանցը հանդես է գալիս բացասման նշանակությամբ, և այդ բառը կարելի է բառացի այսպես մեկնաբանել՝ «սառնությունը կտրել», այսինքն՝ թախանձել, թախանձագին խնդրել, աղաչել, աղերսել:

**ԽՄՈՒՍ.** Արմատական բառարանում այս բառը ոչ *խառ* արմատից կազմված բառերի ցանկում է նշված և ոչ էլ որպես առանձին գլխաբառ է ներկայացված: Որպես *խառ*-ից կազմված չդիտվելու պատճառը, կարծում ենք, այն կարող էր լինել, որ Աճառյանը այդ արմատը ճանաչում է միայն *ուղորում, ուղորք* նշանակությամբ:<sup>25</sup> Այդ արմատից սերված է համարում *խառատել* բառը և դա ներկայացնում է «ուղորելով՝ քաշկոտելով ծամծամել» նշանակությամբ:<sup>26</sup> Կարծում ենք՝ *խառ*-ի մեջ միայն ուղորում, ուղորք նշանակություն տեսնելու պատճառով է, որ Հր.Աճառյանը չի անդրադարձել նաև *խառել* բառին, որի նշանակություններից մեկը «Բառգիրք հայոց»-ում տրված է կտրել բայով:<sup>27</sup> **Խառել** բայի մեջ առկա կտրել իմաստը հիմք է տալիս մեզ ասելու, որ *խառ* արմատն օժտված է եղել առհասարակ *կտրել* և ոչ թե միայն *ուղորելով կտրել* իմաստով:

**Կտրել** նշանակությամբ օժտված *խառ* արմատն ենք տեսնում *խառատ* բառում: Խառատը, այսինքն՝ հյուսնը, որ փայտյա իրերը պատրաստողն է, այլ կերպ ինչպես կարող էր ճանաչվել, եթե ոչ առաջին հերթին հենց իր կտրելու գործողությամբ: Որոշ դժվարություն է հարուցում *խառատ* բառում *ատ* ածանցի նշանակության մեկնաբանումը: Գուցե առհասարակ *ատ* ածանցն օժտված է նաև այնպիսի նշանակությամբ, որ դեռևս ընկալված, ճանաչված չէ: Մինչև վերջերս դժվար լուծելի չէ՞ր համարվում

<sup>21</sup> Մտ.Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 491: Էդ.Աղայան, նշվ. աշխ., էջ 1514:

<sup>22</sup> Մ. Ա բ ե դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 249: Կարծում ենք՝ Մ. Աբեղյանի կողմից թվարկված *ատ* ածանցով կազմված բառերի ցանկում վրիպակի հետևանքով է տեղ գտել կատակահատ բառաձևը, որ այդպես «ժամառորեն» անցնում է նրա «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մի հրատարակությունից մյուսները: Մ.Աբեղյանը ի թիվս գունատ, կոնատ, փարատ և այլ բառերի որպես *ատ* ածանցով կազմված է նշում նաև «կտավատ» բառը՝ «... կտավատ /կատվահատ, կտավահատ/»/նույն տեղում/: Կասկած չունենք, որ Մ.Աբեղյանը սույն պարագայում ցանկացել է «կտավատ» բառի դիմաց, փակագծերի մեջ, նշել, որ դա առաջացել է կտավ և հատ բառերից, որոնք կարող են կապակցվել և՛ առանց ա հոդակապի /կտավհատ/, և՛ հոդակապով /կտավահատ/: Ուրեմն՝ փակագծերի մեջ պիտի տեղ գտած լիներ ոչ թե «կտավահատ», այլ «կտավհատ» բառը: «Կտավահատ»-ը վրիպակի հետևանքով է առաջ եկել, որ տեղ է գտել նախ «Հայոց լեզվի տեսություն» աշխատության 1931թ. հրատարակությունում /էջ 257/, ապա և՛ 1965թ. հրատարակությունում /էջ 249/, ինչպես նաև հեղինակի Երկերի 2 հատորում /էջ 203/:

<sup>23</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 14:

<sup>24</sup> Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 41:

<sup>25</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 335:

<sup>26</sup> Նույնը /Ընդգծումը մերն է - Ս.Մ/:

<sup>27</sup> Բառգիրք հայոց, Եր., 1975, էջ 140:

հավատ, անքատ, լնփատ, արմատ, հաստատ բառերի *ատ*-ի հարցը.<sup>28</sup> *Խառատ* բառում *ատ*-ի նշանակության մեկնաբանմանը կարելի է մոտենալ նաև այդպիսի դիտակետից: Հայտնի է, որ ածանցները կարող են լինել ոչ միայն «խմաստավոխական կամ իմաստահավելական» տիպի, որոնք «բառին հաղորդում են իմաստային նոր առում, այլև «գործառական փոխանցական» տիպի, որոնք «փոխում են բառի գործառական արժեքը», մի խոսքի մասը վերածում են այլ խոսքի մասի «առանց գոյաբանական իմաստի փոփոխության», ինչպես՝ *լուրջ – լրջորեն*:<sup>29</sup> Կարելի է այնպես մտածել, որ *խառ* արմատում եղած գործողության իմաստային առումը *խառատ* բառում գոյականացված դրսևորումով է հանդես եկել:

*ՋՐԱՍ*. Էդ. Աղայանն այս բառը ներկայացնում է «Ջուրը կտրած՝ կտրված» նշանակությամբ՝ առանց համապատասխան օրինակով վավերացնելու այդ նշանակությունը:<sup>30</sup> Պարզ զգացվում է, որ կողմնորոշվել է ատ ածանցի բացասման նշանակությամբ: Ստ.Մալխասյանցի բառարանում *ջրատ*-ը այսպիսի նշանակությամբ և գործածությամբ է ներկայացված. «ՋՐԱՍ. թույլ, անոյժ (օղիի մասին): Ջրատ արաղ է, ինչքան ուզում ես խմի, չի հարբեցնի»:<sup>31</sup> Չզայնվում է, որ Մալխասյանցը *ջրատ* բառում չի տեսնում *պակասի, կտրվելու* նշանակություն:

Ջրատ բառում ատ ածանցը կարելի է ընկալել և՛ սաստկական, և՛ վերածման նշանակությամբ՝ «ջուր շատ պարունակող», «ջրի վերածված»: Առաջին նշանակությամբ առնչվում է *հաստատ, խորխորատ, քկյատ* և այդպիսի բառերի հետ, իսկ երկրորդ նշանակությամբ՝ *քագատ, ածվատել* և նման բառերի հետ:

*ԱՍՏՈՒԿԸ*. *Ատ* ածանցը սաստկական նշանակությամբ ճանաչելը մեզ հնարավորություն է տալիս *աստուած* (աստված) բառը ներկայացնել մորովի մեկնաբանությամբ, հնարավոր ենք համարում դա ճանաչել «աստու» հիմքով և սաստկական նշանակությամբ *ատ* ածանցով կազմված բաղադրություն՝ աստու+ատ (աստուատ):

*Աստված* բառի մեկնությանն անդրադարձողների կողմից գրեթե անուշադրության մատնված *աստու* բառ գրաբարում գոյություն ունեցել է, թեև հավանաբար քիչ գործածական լինելու պատճառով ոչ բոլոր բառարանագիրների կողմից է պատշաճ ուշադրության արժանացել: Նոր հայկազյան բառարանում մեկ բնագրային օրինակով այդ բառն այսպես է ներկայացված: «ԱՍՏՈՅ, կամ ԱՍՏՈՒ. *Տ. ազդոյ, և աստի՝ իբր հաստատուն, զորատր. Մայն աստու է (կամ ազդու է) ՚ի հարկանիլն ուռամբ*»:<sup>32</sup> «Հաստատուն, զորավոր» նշանակությամբ *աստու* բառի արմատը *ատ*-ն է՝ «ուժ» նշանակությամբ,<sup>33</sup> որի հետ ծագումնաբանական ընդհանրություն ունեն *աստեալ* «հաստատամիտ, զորավոր», *աստևոր* «զորավոր, ճշմարիտ, հաստատուն» բառերը:<sup>34</sup> Ուրեմն՝ *սաստկական* նշանակությամբ *ատ* ածանցով կազմված *աստուատ* բառում ներառված են «ուժ, սաստիկ հաստատուն, շատ զորավոր, ճշմարիտ» իմաստային առումներ: Ի՞նչ պատճառով կարող էր *աստուատ* բառը հետագայում փոխարինված լինել «աստուած» բառաձևով: Այդ հարցում երկու հավանական պատճառ ենք տեսնում: Հնարավոր է, որ որոշակի դեր ունեցած լինի տարնմանումը. *աստուատ* բառի երկու *տ* հնչյուններից առաջինը ազդել է երկրորդի վրա և հեռացրել է իրենից: Արդյո՞ք հավանական չէ նաև այն հնարավորությունը, որ *աստուած* ձևի երևան գալու հարցում դեր ունեցած լինեն հունաբան հեղինակները: Այս կապակցությամբ, նախ, միանգամայն ուշագրավ պիտի համարել այն կարծիքը, որ, *աստուած* բաղադրությունը, իբրև բառային միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան

<sup>28</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 237:

<sup>29</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 158:

<sup>30</sup> Էդ. Աղ ա յ ա ն, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1248:

<sup>31</sup> Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 150:

<sup>32</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 320:

<sup>33</sup> Հր. Ա ճ ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 277:

<sup>34</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, էջ 318: Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 85, 277: Բառգիրք հայոց, Եր., 1975, էջ 34:

V դ. արդեն որպես *որոշակի հասկացության* անվանում հանդիսանալը:<sup>35</sup> Հայկական կյանքում V դարում այդ «որոշակի հասկացությունը» հավատի նոր, քրիստոնեական ըմբռնումը չէ՞ր, որ հետևողական և անողոք պայքարի մեջ էր մտել հեթանոսության դեմ: Բնականաբար համապատասխան վերաբերմունք պիտի ցուցաբերված լիներ նաև գերագույն գործության գաղափարն արտահայտող բառի գործածության հարցում: Եթե *դիք* բառը պիտի գործածվեր հեթանոսական աստծու անվանման համար, ապա քրիստոնեական բարձրյալի ճանաչման համար ավելի համար, վայելուչ բառ կա՞ր, քան *աստուատ-ը*: Բայց որոշ նկատառումներով հավանաբար ցանկալի է համարվել այդ բառը փոքր-ինչ փոխված ձևով գործածության մեջ դնել, որի իրականացումն ամենևին էլ դժվար և արտառոց բան չպիտի թվար արհեստական եղանակով ոչ միայն նոր բառեր ու բառաձևեր, այլև նույնիսկ ածանցներ ստեղծելու անհատական հնարամտություններով օժտված հունարան դպրոցի ներկայացուցիչների համար: Այս կապակցությամբ նկատի ունենանք, թե հունարան հեղինակներն ինչպես «հաճախ, հայերեն սովորական ձևերը /իմա՝ բառերը-Ս.Մ./ ձևով կամ նշանակությամբ փոփոխված»<sup>36</sup> գործածության մեջ են դրել որպես նոր կազմություններ: Բավարարվենք այդպիսի մի երկու օրինակի մատնանշումով: Ինչպես հայտնի է, հունարան հեղինակները *«համ ծանոթ ձևը դարձրել են հոմ»*,<sup>37</sup> որպես քերականական սեռ նշանակող *մակաուսասր* տերմինն ստեղծել են *հասասար* բառի սկզբի *հ* հնչյունի տրամով,<sup>38</sup> կարծում ենք ոչ թե բարբառային արտասանության, այլ անհատական հնարամտության հետևանքով *սպարարց* բառում հայտնի *դարձ* արմատի փոխարեն տեղ են տվել *թարց* հնարովի ձևին,<sup>39</sup> «այդ» սովորական բառի փոխարեն գործածել են՝ *հայր, որպես-ի* փոխարեն՝ *որզան, նոցա-ի* փոխարեն՝ *նոջա*, «այդպես և ներ նոջայ, ներ սոջայ»<sup>40</sup> և այլն:

#### ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Мелконян \_\_\_

Данная статья посвящена исследованию таких слов с армянским суффиксом “US” (русск. экв. “без-”), которые, не были трактованы, исходя из многозначности данного суффикса, или же слова, трактовка которых в том или ином аспекте нуждается в проверке и в корректировке. Необходимое внимание уделено вопросу периода формирования армянского суффикса “US”. Если бы этот суффикс до некоторых пор не был бы известен значением только отрицания (սպարար-безхвостный), то не было бы абсолютно верным то мнение, что якобы этот суффикс появился в пост-грабарский период, т.е. после V века.

<sup>35</sup> Վ. Հ ա մ ք ա ռ ձ մ մ յ ա ն, Հայերեն *աստված բառի ծագումն ու տիպարանությունը*, Եր., 2002, էջ 32: Ընդգծումները մերն են:

<sup>36</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 162:

<sup>37</sup> Նույնը:

<sup>38</sup> Ա. Մ ու ռ ա դ յ ա ն, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 211:

<sup>39</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 223-224:

<sup>40</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 148, 149: